ԺԲ.00.06 – ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

Ընդհանուր մասնագիտական կրթամաս

1. Պետության առաջացման տեսությունները և դրանց բնութագիրը:
2. Պետության հասկացությունը, էությունը, սոցիալական նշանակությունը, էվոլյուցիան:
3. Իրավունքի հասկացությունը՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ իմաստներով: Իրավահասկացողություն:
4. Իրավունքի և օրենքի հարաբերակցությունը: Իրավական օրենքը:
5. Իրավական մշակույթ (կուլտուրա). հասկացությունը և կառուցվածքը: Իրավական նիհիլիզմ և իրավական իդեալիզմ:
6. Իրավունքի նորմի հասկացությունը, տեսակները, կառուցվածքը և տարրերի հիմնախնդիրը:
7. Իրավաչափ վարքագիծ և իրավախախտում. հասկացությունը և տեսակները:
8. Ինքնիշխան պետության իրավաբանական բովանդակության դրսևորման ձևերը:
9. Ժողովրդաիշխանության անմիջական ձևերի բովանդակությունը և դրանց իրացման կարգը:
10. Կառավարության սահմանադրաիրավական կարգավիճակը:
11. ՀՀ դատական իշխանության մարմինները, կազմավորման և գործունեության կարգը և սկզբունքները: Դրանց էվոլյուցիան՝ սահմանադրական բարեփոխումների համատեքստում:
12. Ազգային ժողովի պատգամավորական խմբակցությունների և խմբերի կազմավորման և լուծարման առանձնահատկությունները:
13. ՀՀ սահմանադրական կարգի հասկացությունը և բովանդակությունը:
14. «Ընտրական իրավունք» և «ընտրական համակարգ» եզրույթների իրավական նշանակությունը և հարաբերակցությունը:
15. Սահմանադրական դատավարության ընթացակարգն ու դրա առանձնահատկությունները:
16. Տեղական ինքնակառավարման հասկացությունը, տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական լիազորությունները:
17. Իրավունքների և օրենքով պահպանվող շահերի պաշտպանության ձևերը: Դատական պաշտ-պանության և արդար դատաքննության իրավունքները:
18. Երրորդ անձանց հասկացությունը և տեսակները, գործի քննությանը ներգրավվելու հիմքերը և դատավարական կարգը:
19. Ոչ պատշաճ պատասխանողի փոխարինման դատավարական կարգը: Գործի քննությանը նոր պատասխանողի ներգրավումը:
20. Ենթակայության հասկացությունը: Դատական ենթակայություն և ընդդատություն: Քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա գործերի շրջանակը որոշելու չափանիշները:

21. Դատական ծախսերի հասկացությունը և տեսակները քաղաքացիական դատավարությունում: Դատական ծախսերի ինստիտուտի գործառույթները:
22. Վարչական դատարանի իրավասության տարանջատման չափանիշները:
23. Գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման և տնօրինչականության սկզբունքների հարաբերակցությունը վարչական դատավարությունում:
24. Միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցությունը:
25. Միջազգային իրավունքի աղբյուրները, սուբյեկտները:
26. Տարածքների տեսակները միջազգային իրավունքում:
27. Միջազգային պայմանագրերի կնքումը: Միջազգային պայմանագրերի կնքման գործընթացի իրավական կարգավորումը ՀՀ Սահմանադրությամբ:
28. Բնակչության և քաղաքացիության հասկացությունները: Քաղաքացիության ձեռքբերման, փոփոխության և դադարեցման հիմքերը:
29. Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային համագործակցությունը:
30. Միավորված ազգերի կազմակերպությունը: ՄԱԿ-ի գլխավոր մարմինները: Դիվանագիտական ներկայացուցչության անձնակազմի անդամների արտոնությունները և անձեռնմխելիությունները:
31. Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման միջոցները:
32. Քրեական օրենքի հետադարձ ուժը:
33. Քրեական օրենքի գործողությունը քրեական օրենքով արգելված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքում կատարելու դեպքում:
34. Քրեական օրենքի գործողությունը քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարելու դեպքում:
35. Հանցանքի հասկացությունը, հատկանիշները, տեսակները:
36. Դիտավորությունը և անզգուշությունը որպես սուբյեկտիվ կողմի դրսևորում:
37. Հանցագործության նախապատրաստությունը և պատիժ նշանակելը նախապատրաստության դեպքում:
38. Տուգանքը որպես պատժատեսակ:
39. Ավազակությունը և դրա ծանրացնող հանգամանքները:
40. Շորթումը և դրա ծանրացնող հանգամանքները:
41. Քրեական հետապնդում. հասկացությունը, սուբյեկտները և նրանց լիազորությունները:
42. Արդար դատական քննության իրավունքը քրեական դատավարությունում:
43. Խափանման միջոցների հիմքերը և կիրառման դատավարական կարգը:
44. Վարույթի հանրային սուբյեկտների ընդհանուր բնութագիրը:
45. Պաշտպանության կողմի մեջ մտնող սուբյեկտների ընդհանուր բնութագիրը:
46. Ապացույցի հասկացությունը և նշանակությունը քրեական դատավարությունում:
47. Քրեական հետապնդման հարուցումը և մեղադրանքի առաջադրումը:
48. Ապացուցողական գործողությունների հասկացությունը և կատարման ընդհանուր կանոնները:
49. Վերաքննիչ վարույթի հասկացությունը և նշանակությունը:
50. Վճռաբեկության կարգով դատական որոշումները բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտները, բողոքարկման հիմքերը և կարգը:
51. Քաղաքացիական իրավունքների իրականացման սկզբունքները և պաշտպանությունը:
52. Քաղաքացիական իրավունքի սուբյեկտների իրավասուբյեկտությունը:

53. Սեփականության իրավունքի բովանդակությունը, ծագումը և դադարումը:
54. Գործարքի հասկացությունը, տեսակները և անվավերությունը:
55. Գույքի օտարման և գույքի օգտագործման պայմանագրերի համակարգը և բնութագիրն ըստ ՀՀ քաղաքացիական օրենսդրության:
56. Վարկահաշվարկային հարաբերությունները կարգավորող պայմանագրերի համակարգը և բնութագիրը:
57. Պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցումը:
58. Հեղինակային և հարակից իրավունքները ՀՀ օրենսդրությամբ:
59. Ժառանգման հիմքերն ըստ ՀՀ օրենսդրության:
60. Ամուսինների, ծնողների և երեխաների անձնական և գույքային իրավունքները:
61. Ալիմենտային պարտավորությունների ընտանեկան-իրավական կարգավորումը:
62. Գիտության արդի հիմնական հայեցակարգերը և գիտության գործառույթները:
63. Գիտության ոլորտում պետության քաղաքականության սահմանադրական նպատակները. նպատակների և միջոցներ հարաբերակցությունը:
64. Գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական սահմանները և սահմանափակումը:
65. Հիմնարար, կիրառական և որոնողական հետազոտությունների էությունը:
66. Գիտահետազոտական աշխատանքի փուլերը:
67. Գիտական հետազոտության թեմայի ընտրությանը ներկայացվող հիմնական պահանջները:
68. Գիտական կանխատեսման նպատակները, հիմնական խնդիրները և մեթոդները:
69. Տեղեկույթի աղբյուրների հավաքման, վերլուծության ու համակարգման գործընթացը՝ գիտական հետազոտության համատեքստում:
70. Առաջնային գիտական տեղեկույթի հավաքման, ամրագրման, պահպանման տեխնիկան:
71. Գիտական աշխատանքի արդյունքների նկարագրման և ձևակերպման հիմնական տեսակները:
72. Գիտական էթիկայի նորմերը:
73. Գիտական եզրույթների շարադրման հիմնական հնարքները:
74. Գիտական աշխատանքի «դարակադրման» շրջանը:
75. Աղբյուրագիտության արդի առանձնահատկությունները:

Լրացուցիչ մասնագիտական կրթամաս

1. Միջազգային իրավունքի հասկացությունը և առանձնահատկությունները:
2. «Միջազգային իրավունքի սկզբունք» հասկացությունը և միջազգային իրավունքի սկզբունքների դասակարգումը:
3. Պետությունների միակողմանի ակտերը ժամանակակից միջազգային իրավունքում:
4. Պետությունների իրավահաջորդությունը: Իրավահաջորդության առաջացման հիմքերը: Իրավահաջորդության տեսակները:
5. Միջազգային պայմանագիրը ՀՀ ներպետական իրավունքի աղբյուրների համակարգում:
6. Միջազգային պայմանագրային նորմերի և սկզբունքների կիրառումը ազգային դատարանների կողմից:

7. Իրենց անկախության համար պայքարող ազգերի և ժողովրդների միջազգային իրավասուբյեկտության բովանդակությունը:
8. Միջազգային կազմակերպությունների միջազգային իրավական պատասխանատվության առանձնահատկությունները:
9. Արտաքին հարաբերությունների արտասահմանյան և ներպետական մարմինների համակարգը:
10. ՄԱԿ-ի մարմինների համակարգը:
11. Տարածաշրջանային միջազգային կազմակերպությունները:
12. Միջազգային դատական ընթացակարգերը:
13. Պետությունների միջազգային-իրավական պատասխանատվությունը մասնավոր անձանց կողմից իրականացված իրավախախտումների համար:
14. Միջազգային համագործակցությունը ահաբեկչության և ծայրահեղականության /էքստրեմիզմի/ դեմ քրեաիրավական պայքարում:
15. Պատերազմական գործողությունների միջազգային իրավական կարգավորումը:
16. Մարդու իրավունքների ոլորտում միջազգային ստանդարտները և դրանց արտացոլումը միջազգային փաստաթղթերում:
17. Մարդու իրավունքների պաշտպանությունը զինված ընդհարումների ժամանակ:
18. Անհատների քրեական պատասխանատվությունը ագրեսիա հանցագործության համար:
19. Ծովային տարածությունների դասակարգումը:
20. Միջազգային օդային իրավունքի հիմնական սկզբունքները: «Օդի ազատություններ»:
21. Միջազգային տնտեսական համագործակցության հիմնական սկզբունքներն ու ռեժիմները:
22. Միջազգային տիեզերական իրավունքի սուբյեկտներն ու օբյեկտները:
23. Շրջակա միջավայրի պաշտպանության իրավունքի աղբյուրները և հիմնական սկզբունքները:
24. Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքի իրավական բովանդակությունը:
25. «Անվտանգություն» եզրույթի բովանդակությունը: Պետությունների և միջազգային հանրության անվտանգության սպառնալիքները: